



ԴԵՂԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի հաղորդագրություն

Դեղերի կողմնակի և վնասակար ազդեցությունների մշտադիտարկման բաժին

Այս համարում

1. **Զուլեդրոնաթթու**
2. **Օմեպրազոլ**
3. **Վարենիկլինի տարտրատ**
4. **Տամօսիֆեն**
5. **Գոնադոտրոպին-ձերբագատող հորմոնի ներհակորդներ**

Զուլեդրոնաթթու: Երիկամային ֆունկցիայի խանգարման վտանգ

Կանադա: Կանադայի առողջապահության նախարարությունը բժիշկների համար տարածել է տեղեկատվություն այն մասին, որ զուլեդրոնաթթվի կիրառումից կարող է զարգանալ երիկամի ֆունկցիայի խանգարում, իսկ երբեմն էլ սուր երիկամային անբավարարություն:

Բժիշկներին հասցեագրված տեղեկատվության մեջ Նովարտիս Ֆարմասյութիքալս Կանադա կազմակերպությունը հաղորդել է, որ 2010թ-ի ապրիլի 30-ի դրությամբ ստացել է զուլեդրոնաթթվի կիրառումից երիկամային անբավարարության մասին 265 տեղեկություն:

Դեպքերը հիմնականում դիտվել են երիկամային ֆունկցիայի ընկճմամբ կամ վտանգի խմբի անձանց շրջանում: Վտանգի գործոններն են՝ տարիքը, զուլեդրոնաթթվի հետ երիկամաթունային դեղերի կամ միզամուղների միաժամանակ կիրառումը, զուլեդրոնաթթվի կիրառման հետևանքով առաջացած ջրազրկումը: Ելնելով վերոնշյալից՝ բժիշկներին խորհուրդ է տրվում չնշանակել զուլեդրոնաթթու երիկամային ֆունկցիայի ընկճմամբ հիվանդներին, իսկ վտանգի խմբի անձանց՝ կիրառել զգուշությամբ:

WHO Pharmaceuticals Newsletter No 6, 2010

Օմեպրազոլ: Թերմազնեզիումարյունության վտանգ

Նոր Զելանդիա: Դեղերի անվտանգության գործակալությունը /Medsafe/ տարածել է տեղեկատվություն այն մասին, որ օմեպրազոլով բուժվելիս կարող է դիտվել հիվանդների թերմազնեզիումարյունություն, որի ախտանիշներ-

րից են մկանակծկանքը, թուլությունը, դրդվածու- թյունը կամ գիտակցության մթազնումը:

Համաձայն հաղորդագրության՝ թերմազնեզիումարյունության դեպքերի մեծամասնությունը ծագել է օմեպրազոլի նորմալ դեղաչափով երկարատև կիրառումից, և մազնեզիումի քանակը օրգանիզմում վերականգնվել է դեղի կիրառման դադարից հետո: Թերմազնեզիումարյունությունը որոշ հիվանդների օրգանիզմում կարող է ուղեկցվել նաև թերկալցիումարյունությամբ, որի ախտանիշները դրսևորվում են ռիթմաշեղման սուր նոպայով, պրկախտով, սուր փսխումներով՝ հանգեցնելով էլեկտրոլիտային հաշվեկշռի խախտմանը և հոգեկան ախտանիշների առաջացմանը:

WHO Pharmaceuticals Newsletter No 4, 2010

Վարենիկլին տարտրատ:

Նյարդահոգեկան շեղումներ և գերզգայնության ռեակցիայի վտանգ

Կանադա: Կանադայի առողջապահության նախարարությունը առողջապահության աշխատակիցներին տեղեկացնում է այն մասին, որ վարենիկլին տարտրատ /չամպիքս/ դեղի կիրառման հրահանգի «կողմնակի ազդեցություններ» բաժնում ավելացվել է նոր նախագուշացում նյարդահոգեկան կողմնակի ազդեցությունների հնարավոր դրսևորման մասին: Հաղորդագրության մեջ նշվում է, որ ստացվել են մի շարք հաղորդումներ լուրջ նյարդահոգեկան ախտանիշների զարգացման մասին, ինչպիսիք են ընկճված տրամադրությունը, դրդվածությունը, ագրեսիան, թշնամանքը, վարքի փոփոխությունը, ինքնասպանության դեպքերը և հոգեկան հիվանդության սրացումը: Համաձայն հաղորդագրության՝ վարենիկլին տարտրատի և ալկոհոլի միաժամանակյա կիրառումը ևս կարող է նպաստել նման կողմնակի ազդեցության դրսևորմանը:

Հիվանդներին խորհուրդ է տրվում նյարդահոգեկան ախտանիշների դրսևորման կամ վարքի փոփոխության դեպքում անմիջապես դադարեցնել դեղի կիրառումը և դիմել բուժող բժշկին:

Հետշուկայական հետազոտությունների արդյունքում ստացվել են տվյալներ քնկոտության, գլխապտույտի, ցնցումների, գիտակցության կորստի և ցրվածության դեպքերի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով չամպիքսով բուժվողներին խորհուրդ չի տրվում զբաղվել ուշադրություն պահանջող աշխատանքով (օր. մեքենա վարել):

Ըստ հաղորդագրության՝ վարենիկլինի տարտրատ կիրառող հիվանդներն ունեցել են գերզգայնության ռեակցիաներ ինչպիսիք են՝ հազվադեպ, սակայն կյանքին վտանգ սպառնացող անոթանյարդային այտուցը, սուր մաշկային ռեակցիաները՝ ներառյալ Սթիվենս-Ջոնսոնի համախտանիշը և կարմրամաշկությունը:

Բժիշկներին և բուժվողներին խորհուրդ է տրվում սուր գերզգայնության ռեակցիաներ նկատելիս անմիջապես դադարեցնել դեղի կիրառումը:

WHO Pharmaceuticals Newsletter No 4, 2010

Տամօքսիֆեն: Դեղային փոխազդեցություն

Միացյալ Թագավորություն: Դեղերի կարգավորիչ գործակալությունը (MHRA) տարածել է տեղեկատվություն այն մասին, որ CYP2D6 ֆերմենտի ժառանգական բազմաձևությունը և CYP2D6-ի պոտենցիալ արգելակիչների միաժամանակյա կիրառումը կարող են հանգեցնել տամօքսիֆենով բուժվողների անսպասելի կլինիկական պատասխանի:

Տամօքսիֆենը էստրոգենային ընկալիչների ընտրողական ձևափոխիչ է: Դրա ակտիվ նյութը էնօքսիֆենն է, որը գոյանում է CYP2D6 ֆերմենտի մասնակցությամբ:

Գործակալության տեղեկության համաձայն՝ CYP2D6 գենի ժառանգապես պայմանավորված, չգործող ալելով (թույլ մետաբոլիզատորներ) կամ CYP2D6 ֆերմենտի արգելակիչներ ընդունող հիվանդների կողմից տամօքսիֆենի ընդունումը կարող է հանգեցնել ակտիվ նյութի խտության նվազմանը, որի արդյունքում թուլանում է տամօքսիֆենի կլինիկական արդյունավետությունը:

Հետևաբար բժիշկներին խորհուրդ չի տրվում միաժամանակ նշանակել տամօքսիֆեն և CYP2D6-ի արգելակիչներ՝ պարոքետին, ֆլուօքսետին, բուպրոպիոն, քվինիդին և այլն:

WHO Pharmaceuticals Newsletter No 6, 2010

Գոնադոտրոպին-ձերբագատող հորմոնի ներհակորդներ: Շաքարախտի և որոշ սիրտ-անոթային հիվանդությունների զարգացման վտանգ

ԱՄՆ: Սննդի և դեղերի վարչությունից ստացվել է տեղեկություն այն մասին, որ գոնադոտրոպին-ձերբագատող հորմոնի ներհակորդների կիրառման հրահանգի «նախազգուշացումներ» բաժնում պետք է ավելացվի անվտանգության վերաբերյալ նոր տեղեկատվություն: Ըստ նոր տեղեկատվության՝ շազանակագեղձի քաղցկեղի բուժման համար գոնադոտրոպին-ձերբագատող հորմոնի ներհակորդներ կիրառող հիվանդների շրջանում մեծ է շաքարախտի և որոշ սիրտանոթային հիվանդությունների՝ սրտի հանկարծակի կանգի, կաթվածի զարգացման վտանգը:

Նկատի ունենալով վերոնշյալ վտանգի գործոնները՝ բժիշկներին խորհուրդ է տրվում գնահատել օգուտ/վտանգ հարաբերակցությունը գոնադոտրոպին-ձերբագատող հորմոնի ներհակորդներով շազանակագեղձի քաղցկեղի բուժումից առաջ: Այդ դեղերով բուժվող հիվանդների շրջանում պետք է պարբերաբար հսկել արյան մեջ գլյուկոզի և/կամ գլիկոլացված հեմոգլոբինի մակարդակը, ինչպես նաև միաժամանակ պետք է իրականացնել սիրտ-անոթային հիվանդությունների ախտանիշների զարգացման մշտադիտարկում:

WHO Pharmaceuticals Newsletter No 6, 2010

Հասցեն՝ 0001, ք. Երևան, Մոսկովյան 15/1
Հեռ.՝ (374 10) 58 40 20, 58 41 20
Ֆաքս՝ (374 10) 54 24 06
Էլ-փոստ: naira@pharm.am
Web : <http://www.pharm.am>

Դուք կօգնեք հազարավոր հիվանդների, եթե տեղեկացնեք մեզ դեղի կասկածելի կողմնակի ազդեցությունների մասին :